ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/02

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.01.2021թ. թիվ 26/26-1/51-2021 գրությամբ Ա/Ձ Նատալյա Հովհաննիսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ ոստիկանության 29.12.2020թ. թիվ 3/27/58597-20 գրության հիման վրա 11.01.2021թ. թիվ 26/26-1/51-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Նատալյա Հովհաննիսյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. Ա/Ձ Նատալյա Հովհաննիսյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Ա/Ձ Նատալյա Հովհաննիսյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Նատալյա Հովհաննիսյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/02 ընթացակարգի շրջանակներում 20.01.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.12.2020թ. թիվ 3/27/58597-20 գրությամբ հայտնել է, որ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ ուղարկվում են «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՁՊՎ-1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած Մասնակցի փաստաթղթերը, արձանագրությունները և Մասնակցի կողմից ուղարկված պատասխան գրությունը պայմանագիր կնքելուց հրաժարվելու վերաբերյալ՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/02 ընթացակարգի շրջանակներում 20.01.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/02 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/02 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպվել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՁՊՎ-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Նատալյա Հովհաննիսյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.12.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Նատալյա Հովհաննիսյանը ճանաչվել է ընտրված մասնակից, և որոշվել է անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ կնքել պայմանագիր:

3. Ա/Ձ Նատալյա Հովհաննիսյանը 25.12.2020թ. ՀՀ ոստիկանությանն ուղղված հայտարարությամբ հայտնել է, որ հրաժարվում է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՁՊՎ-1» ծածկագրով պայմանագիրը կնքելուց:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.01.2021թ. թիվ 26/26-1/51-2021 գրությունը, ՀՀ ոստիկանության 29.12.2020թ. թիվ 3/27/58597-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպվել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՁՊՎ-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Նատալյա Հովհաննիսյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.12.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Նատալյա Հովհաննիսյանը ճանաչվել է ընտրված մասնակից, և որոշվել է անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ կնքել պայմանագիր:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Նատալյա Հովհաննիսյանը 25.12.2020թ. ՀՀ ոստիկանությանն ուղղված հայտարարությամբ հայտնել է, որ պայմանավորված առողջական վիճակի կտրուկ վատթարացմամբ՝ չի կարող իրականացնել ՀՀ ոստիկանության կարիքների համար ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերում /ՁՊՎ/ պահվող անձանց սնունդ մատակարարելու ծառայությունը և հրաժարվել է պայմանագիրը կնքելուց:

Հարկ եմ համարում ընդգծել, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերի ուսումնասիրության նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2021/02 ընթացակարգի շրջանակներում Մասնակիցը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի ներկայացրել որևէ ապացույց, որով կհիմնավորվեր վերջինիս առողջական վիճակի կտրուկ վատթարացումը, ինչպես նաև՝ վատթարացման հետևանքով կնքվելիք պայմանագրի կատարման անհնարինությունը:

Այսպես, ուսումնասիրելով ՀՀ ոստիկանության կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Նատալյա Հովհաննիսյանը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո՝ 25.12.2020թ., Պատվիրատուին ուղղված գրությամբ հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.01.2021թ. թիվ 26/26-1/51-2021 գրությամբ Ա/Ձ Նատալյա Հովհաննիսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Նատալյա Հովհաննիսյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**